

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ

ԹԱՌԱԹՈՒՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կազմել է համայնքի ղեկավարը՝ ՎԱՀԱՆԻԿ ՄԱՐԿՈՍՅԱՆԸ

Հաստատվել է համայնքի նախագահի կողմից՝ 2016թ.թիվ 34-ն որոշմամբ



2016թ., գ.ԹԱՌԱԹՈՒՄԲ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	Համայնքի ղեկավարի ուղջույնի խոսք	3
2.	Համայնքի իրավիճակի նկարագրություն	4
2.1.	Համայնքի ընդհանուր նկարագրություն	4
2.2.	Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը	6
2.3.	Համայնքում իրականացվող ծրագրերը	7
2.4.	Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ	8
2.5.	Չարգացման խոչընդոտներ և դժվարություններ	10
2.6.	Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւժՅՍ) վերլուծություն	11
3.1.	Համայնքի զարգացման տեսլական	12
3.2.	Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում	12
5.2.25	մոնիթորինգ	

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Թառաթումբ համայնքը ունի 535 մշտական բնակչություն, որից շուրջ 430-ը 18-60 տարեկան: Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը օրակարգային հարց է:

Համայնքում առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ Կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում
- Փողոցների լուսավորություն
- Գյուղամիջյան և հանդամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում
- Քարի մշակում և արտահանում

Համայնքը համագործակցում է մի շարք ծրագրերի հետ, նախատեսվում է հնարավորինս ընդլայնել համագործակցության շրջականները և ներգրավվել նոր ծրագրեր, մասնավորապես այժմ համայնքը համագործակցում է «Ֆուլեր տնաշինական կենտրոն»-ի հետ:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Թառաթումբ համայնքը վերաբնակեցվել է 1828թ. Պարսկաստանի Խոյ գավառի Ղորուխ գյուղից ներգաղթած 10 հայ ընտանիքներով: Համայնքն ունի հին պատմություն, ինչի մասին վկայում են համայնքում գտնվող եկեղեցին ու մատուռները:

Համայնքը ծովի մակարդակից բարձր է 1640 մ, սահմանակից է Չեղարգունիքի մարզին և Վայոց Ձոր մարզի Հորս, Քարագլուխ, Սալլի, Աղնջածոր և Ելփին գյուղերին, կլիման չոր է, տեղումների քանակը 300-350մմ: Համայնքը ունի գեղեցիկ դիրք, գյուղի միջով է անցնում Թառաթումբ գետը:

Բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ: Համայնքը մարզկենտրոնից գտնվում է 22 կմ հեռավորության վրա:

Համայնքի տարածքում կան հանքային հանածոներ, շինարարական քար՝ գրանիտ, տրավերտին Իմանի արխաջ տարասքում):

Համայնքի առկա (ներառյալ ժամանակավոր ներկա) բնակչության թիվը 2016թ. հունվարի 1-ի տվյալներով կազմում է 535 մարդ, մշտական բնակչությունը՝ 485 մարդ, տնտեսությունների թիվը՝ 150:

Համայնքի վարչական տարածքը 2072,9հա: Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, մշակույթի տուն, գրադարան:

2.2 Համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը

2017 թվականի տարեկան բյուջեի նախագծով համայնքի ընդհանուր տարեկան եկամուտները կազմում են 9756,0 հազար դրամ, որից սեփական եկամուտներ՝ 1154,4 հազար դրամ:

Համայնքում այժմ գործում են 3 անհատ ձեռնարկատերեր, որոնք մանրածախ կանանքի կետեր են, և 1 ՍՊԸ (Արծաթափայլ եղևնի), որը զբաղվում է քարի մշակմամբ և արտահանմամբ:

Համայնքի բնակչությունը զբաղվում է հողագործությամբ և անասնապահությամբ: Ստացված հիմնական արտադրանքը սպառվում է հիմնականում քաղաք Երևանում:

Համայնքն ունի զբոսաշրջության զարգացման համար նպաստավոր պայմաններ:

Համայնքում գործում է մեկ միջնակարգ դպրոց, որտեղ հաճախում են թվով 44 (2016թ.տվյալներով) աշակերտներ:

Համայնքում գործում է մեկ բուժկետ, որը սպասարկում է համայնքի բնակչությանը:

Համայնքում նպաստառու ընտանիքների ընդհանուր թիվը կազմում է 23 ընտանիք: Թոշակառուների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 87, որից հաշմանդամության թոշակ 29,:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Առաջիկա հինգ տարիներին համայնքը պատրաստվում է համագործակցել ՀՀ կառավարության, միջազգային դոնոր կազմակերպությունների, ինչպես նաև անհատ ներդրողների հետ:

Համայնքը համագործակցում է Հայաստանի „Ֆուլեր տնաշինական կենտրոն“-ի հետ, նպատակ ունենալով համայնքի անապահով և տան կարիք ունեցող ընտանիքներին օգնելու և աջակցելու տան վերանորոգման կամ կառուցման հարցում:

Համայնքը պատրաստակամ է համագործակցել անհատ ներդրողների հետ, ովքեր կցանկանան որևէ ներդրում անել համայնքում:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումներ

Համայնքի բյուջեի եկամուտները գոյանում են համայնքի բյուջե վճարվող հողի հարկից, սուբսիդիաներից, տեղական տուրքերից և ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաներից: Համայնքի բյուջեի եկամուտների սեփական եկամուտները փոքր մաս են կազմում:

2016 թվականի համայնքի սեփական եկամուտները նախատեսվել են 1242.3 հազար դրամ, 2017 թվականի բյուջեի նախագծով նախատեսվել է 1154.4 հազար դրամ:

Առաջիկա 5 տարիներին ակնկալվում է պետության կողմից տրամադրվող ֆինանսական համահարթեցման նպատակով տրվող դոտացիաների չափի ավելացում, ինչպես նաև նախատեսվում է ավելացնել համայնքի բյուջե մտնող սեփական եկամուտների չափաբաժինը, ի հաշիվ տեղական տուրքերի և վճարների: Առաջիկա տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

տարիներին նախատեսված համայնքային ծրագրերի իրականացման գործում նախատեսվում է ներգրավել պետական և դոնոր կազմակերպությունների աջակցությունը:

2.5 Ջարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Թառաթումբ համայնքի բնակչությունը հիմնականում զբաղվում է անասնապահությամբ և հողագործությամբ, ինչը ոչ բոլոր դեպքերում է ապահովում բավարար եկամուտներ ապրուստի միջոցները հոգալու համար, նպաստելով համայնքի բնակչության միգրացիայի աճին, հետևաբար համայնքում առաջնային անհրաժեշտություն է աշխատատեղերի ստեղծումը:

Համայնքն ունի գազաֆիկացման կարիք, որը նույնպես օրակարգային հարց է:

Հետևաբար ելնելով վերոնշյալ խնդիրներից համայնքի առաջիկա 5 տարիներին նախատեսում է իրականացնել հետևյալ ծրագրերը՝

- Նոր աշխատեղերի ստեղծում
- Գազաֆիկացում
- Փողոցների ամբողջական լուսավորություն
- Գյուղամիջյան և հանդիսամիջյան ճանապարհների բարեկարգում
- Համայնքի մաքրության և բարեկարգման խնդիրների կանոնակարգում
- Ոռոգման և խմելու ջրի ցանցերի բարելավում
- Զբոսաշրջության զարգացում
- Քարի մշակում և արտահանում

Վերոնշյալ ծրագրերը նախատեսվում է իրականացնել օգտագործելով համայնքի ուժեղ կողմերը, համայնքային բյուջեի միջոցները, ինչպես նաև ՀՀ կառավարության և այլ միջազգային կառույցների աջակցությունը:

2.6 Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւՅՀՍ) վերլուծություն

<p>Ուժեղ կողմեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Չունենալ զանազան համայնքային կազմակերպություններ և միավորներ 2. Հարձականքի չբռնկվելու ունեցող բնակիչներ 3. Համայնքում գործող մարքի բրանդներ 	<p>Թույլ կողմեր</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնքի բնակիչների սեփական հիմունքների փոքր չափերում ընդհանրացում 2. Ցրտկամության խնդիր 3. Աղքատացում և առաջատար բնակիչների թիվ
<p>SWOT վերլուծություն</p>	
<p>Հնարավորություններ</p> <ol style="list-style-type: none"> 1. Համայնք այցելող զբոսաշրջիկների աճի տեմպեր 2. ՏԻՄ ոլորտում միջազգային կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի շարունակական բնույթ և աճ 3. Համագործակցության շրջանակների ընդլայնում 	<p>Սպառնալիքներ</p> <p>Սպառնալիքներ կապված են համայնքի տարածքային ընդլայնման հետ, որոնք կարող են առաջացնել համայնքի տարածքային ընդլայնման հետ կապված սպառնալիքներ։</p>

3. ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

3.1 Համայնքի զարգացման տեսլական

Համայնքի տեսլականն է ունենալ զարգացած զբոսաշրջությամբ, գյուղատնտեսությամբ, փոքր բիզնեսներով համայնք, որտեղ բնակիչներ կունենան զբաղավածություն, երիտասարդները կվերադառնան և կմնան համայնքում: Դրան է ուղղված համայնքի կողմից կազմված առաջնահերթ ծրագրերի, նպատակների

3.2 Համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում

Ստորև ներկայացվում է համայնքի զարգացման ծրագրերի, նպատակների առաջադրում և կոնկրետ խնդիրների ձևակերպում՝ ըստ առանձին բնագավառների.

ԾՐԱԳԻՐ 1

ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՆՈՐ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ:

Համայնքում կարևոր նշանակություն ունի նոր աշխատատեղերի ստեղծումը: Համայնքում 25 տարի և ավել առկա է կիսակառույց 200քմ շենք, որը նպատակահարմար է օգտագործել, որպես գյուղմթերքների վերամշակման արտադրամաս, որը կստեղծի նոր աշխատատեղեր: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել ՀՀ կառավարություն առջև ստանալու անհրաժեշտ ֆինանսական ներդրումը: Ծրագրի իրականացման համար համայնքապետարանը կկազմակերպի անհրաժեշտ աշխատանքներ և 2017-18թթ.-ին տարեկան բյուջեից կտրամադրի 1 մլն հհ դրամ, իսկ ծրագրի արժեքը կազմում է 20 մլն հհ դրամ:

ԾՐԱԳԻՐ 2

ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱԶԱՖԻԿԱՑՈՒՄ:

Համայնքի համար կարևորագույն խնդիր է գազաֆիկացումը: Բնական գազի բացակայությունը համայնքի տարածքում լուրջ խոչընդոտ է հանդիսանում ազգաբնակչության տնտեսական զարգացման համար: Բնակիչները օգտագործում են անհամեմատ թանկ հեղուկ գազ և էլեկտրական հոսանք, ինչպես նաև հատում կանաչ տարածքներ: Ծրագիրը իրականացնելու համար անհրաժեշտ է հարցը բարձրացնել համապատասխան գերատեսչությունների և ՀՀ կառավարության առջև:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2020 թվականներին՝ պետական աջակցությամբ, որի համար անհրաժեշտ է մոտ 40 մլն հհ դրամ:

ԾՐԱԳԻՐ 3

ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:

Համայնքի համար կարևոր է փողոցային լուսավորությունը: 2019 թվականին նախատեսվում է իրականացնել համայնքի գլխավոր փողոցի լուսավորությունը: Ծրագրի իրականացման համար համայնքը կունենա իր ներդրումը, սակայն վերջնական լուծման համար անհրաժեշտ է ՀՀ կառավարության աջակցությունը: 1,5 կմ ճանապարհի լուսավորության իրականացման համար անհրաժեշտ է 6 մլն հհ դրամ, համայնքի ներդրումը կկազմի 1 մլն հհ դրամ:

ԾՐԱԳԻՐ 4

ՀԱՆԴԱՍԻՋՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՍԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԲԱՐԵՎԱՐԳՈՒՄ:

: Հանդամիջյան և գյուղամիջյան ճանապարհների անբարեկարգ վիճակը խոչընդոտ է գյուղացիների գյուղատնտեսական աշխատանքների կատարմանը, լրացուցիչ խնդիրներ է առաջացնում տեխնիկայի և բնակիչների համար: Կարևոր է ծրագրի ամբողջական իրականացումը:

Որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են վերոնշյալ խնդրի լուծման ուղղությամբ: Նախատեսվում է 2018 թվականի տարեկան բյուջեի միջոցների հաշվին ամբողջությամբ բարեկարգել ճանապարհը: Ծրագրի արժեքը կազմում է 990,0 հազար հհ դրամ:

ԾՐԱԳԻՐ 5

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՔՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԵՎԱՐԳՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ:

Թառաթումբ համայնքում այժմ իրականացվում են աղբահանման աշխատանքներ, մասնավորապես շաբաթը մեկ անգամ կազմակերպվում է կենցաղային աղբի տեղափոխում, կենցաղային աղբի համար գոյություն ունի աղբավայր, որը չի գործում ձմռան ամիսներին, ուստի աղբը անխնա թափվում է գյուղում հոսող գետի մեջ և ափերին, որը իրական աղետ է շրջակա միջավայրի, հարակից պտղատու այգիների և ընտանի կենդանիների համար: Հետևաբար անհրաժեշտ է համայնքում իրականացնել շաբաթական 2-3 աղբահանում: Նախատեսվում է համայնքի բյուջեից ամենամյա ֆինանսական միջոցներ հատկացնել ծրագրի իրականացման համար 2017-21թթ.-ին, որի համար նախատեսվում է համայնքի սեփական եկամուտներից տարեկան տրամադրել 300,0 հազար դրամ:

ԾՐԱԳԻՐ 6

ՈՂՈԳՄԱՆ ԵՎ ԽՍԵՆՈՒ ՋՐԻ ՑԱՆՑԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ:

Համայնքի տարածքում գտնվող մշակովի հողերի 80%-ի ոռոգման համար օգտվում են մայր առվից, որը ունենում է մեծ կորուստներ; Վերջինից խուսափելու համար անհրաժեշտ է անցկացնել խողովակաշար (d=250մմ) 500մ երկարությամբ: Ծրագիրը կֆինանսավորվի մաս-մաս տեղական բյուջեի հաշվին: Ծրագրի իրականացման համար 2017-19 թթ.-ին բյուջեից հատկացնել 2 մլն հհ դրամ:

ԾՐԱԳԻՐ 7

ԹԱՈՒԹՈՒՄԲ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ:


Վայոց ձորը յուրօրինակ զբոսաշրջային գոտի է, հարուստ պատմամշակութային արժեքներով և պատմությամբ: Մարզի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության տարբեր ձևերի զարգացմանը, մասնավորապես էկոտուրիզմ, լեռնային տուրիզմ, ագրոտուրիզմ, առողջարանային տուրիզմ, էքստրեմալ տուրիզմ: Այս առումով բացառություն չէ նաև Թառաթումբ համայնքը, որի ռեսուրսները նպաստում են զբոսաշրջության զարգացմանը: Համայնքում գործում է Սուրբ Հովհաննես եկեղեցին, որը կառուցվել է 1829 թ.-ին: համայնքում կան բազմաթիվ մատուռներ, խաչքարեր, գեղատեսիլ վայրեր: Կազմակերպել ենք էքստրիմ ավտոարշավներ:

ԾՐԱԳԻՐ 8

ՔԱՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Թառաթումբ համայնքի „Իմանի արխաջ,, կոչվող տարածքը գյուղից գտնվում է 4 կմ հեռավորության վրա: նշված տարածքը հարուստ է տրավերդինի պաշարներով, որի մշակումով կստեղծվեն նոր աշխատատեղեր, որը կբերի տեղական բյուջեին լրացուցիչ եկամուտներ: Ծրագրի իրականացման համար ակնկալում ենք ՀՀ կառավարության աջակցությունը: Ծրագրի իրականացման համար նախատեսում ենք 2017-18 թթ.-ին բյուջեից հատկացնել 1 մլն հհ դրամ: Ծրագրի նախնական արժեքը կազմում է 50 մլն հհ դրամ:

ՀԶԾ ֆինանսավորման ուղղությունները



- * ՀՀ Պետական աջակցություն
- ** Համայնքի սեփական ներդրում
- ** Միջազգային և դոնոր կազմակերպություններ

Վերոնշյալ ծրագրերի բյուջեները հաշվարկված են նախնական գնահատմամբ, նախատեսվում է այդ ծրագրերը իրականացնել համաներդրմամբ՝ ներիծգրավելով

համայնքի սեփական եկամուտները, ՀՀ Պետական աջակցությունը, ինչպես նաև միջազգային և դոնոր կազմակերպությունների, անհատ ներդրողների աջակցությունը:

ՀԶԾ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Համայնքի ՀԶԾ ծրագրով ներառված զարգացման ծրագրերը և աշխատանքները կարևոր են համայնքի զարգացման գործում, որոնք միտված են գլխավորապես համայնքի բնակչության կենսամակարդակի և ապրուստի պայմանների բարելավմանը, այդ իսկ պատճառով ՀԶԾ-ի մոնիթորինգը շատ կարևոր:

Նախատեսվում է մոնիթորինգ իրականացնել 5 տարիների ընթացքում վերը նշված բոլոր ծրագրերի իրականացման ժամանակ, ինչպես նաև իրականացնել մոնիթորինգ յուրաքանչյուր ծրագրի ավարտից հետո հասկանալու ստացված օգուտները և հետագայում նմանատիպ ծրագրերի իրականացման ընթացքում կատարվելիք բարեփոխումները:

Մասնավորապես մոնիթորինգի կենթարկվեն հետևյալ ցուցանիշները.

- յուրաքանչյուր ծրագրի բյուջեն, դրա ֆինանսավորման աղբյուրները,
- ծրագրի օգուտները և արդյունքները,
- ներգրավված բնակիչների թիվը,

Կատարված մոնիթորինգի արդյունքները կամփոփվեն և կներկայացվեն համայնքի բնակչության ուշադրությանը տարին մեկ անգամ՝ հրավիրելով համայնքի ընդհանուր ժողով: Այն կօգնի ապահովել ՏԻՄ աշխատանքների թափանցիկություն, ինչպես նաև յուրօրինակ հարթակ կհանդիսանա լսելու համայնքի բնակիչների առաջարկությունները և կարծիքները: